

ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանք համայնքի ղեկավարի հաշվետու ժողովի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

24-րդ հունվարի 2012թ.-ին տեղի ունեցավ Հայրավանք համայնքի ղեկավարի հաշվետու ժողով:

Ժողովին մասնակցում էին ավագանու անդամները և համայնքի բնակիչները: Ժողովին ներկա էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ վարչության աշխատակից Հ. Օհանյանը:

Ժողովի նախագահ՝ Դ. Բաղդյան
քարտուղար՝ Ա. Վիրաբյան

Օրակարգում

1. Հայրավանք համայնքի ղեկավարի հաշվետվությունը մեկ տարվա կատարած աշխատանքների մասին

/Զեկ. Դ. Բաղդյան/

Համայնքի ղեկավար Դ. Բաղդյանը ժողովի մասնակիցներին մանրամասն ներկայացրեց 2011թ.-ի ընթացքում համայնքում կատարված աշխատանքների մասին, որոնք նպաստել են համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

2011թ.-ին համայնքի բյուջեն կատարվել է 107 %-ով: Համայնքի բյուջեն կազմում է վարչական մասով՝ 13059.6 հազ. դրամ, ֆոնդային մասով՝ 3710.5 հազ. դրամ:

Համայնքում կատարված աշխատանքները.

1. Կատարվել և ավարտվել է համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի նախագծային աշխատանքները:
2. Համայնքում ավարտվել է գլխավոր փողոցային լույսերի ցանցի վերանորոգման աշխատանքները:
3. Վերջնականապես ավարտվել է խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցման աշխատանքները:
4. Բյուջեից 276.0 հազ. դրամ ֆինանսական օգնություն է հատկացվել համայնքի սակավապահովված ընտանիքներին:
5. Կազմակերպվել է միջոցառում Հայրենական մեծ պատերազմի և ՀՀ անկախության 20 ամյակին նվիրված:
6. Համայնքի շահագրգիռ բնակիչների և ակտիվ երիտասարդների ջանքերով մաքրվել է համայնքի կենտրոնական փողոցները և վերանորոգվել դաշտամիջյան ճանապարհների հատվածները:
7. Ներկրվել է գարնանացան գարու և աշնանացան ցորենի էլիտար սերմեր և կատարվել ցանքնաշրջանառություն:
8. Գավառ – Սևան միջպետական ճանապարհի եզրերին, ինչպես նաև համայնքի տարածքում, պարբերաբար կատարվել է սանմաքրում և աղբահեռացում:

9. Հանայնքը, ի դեմս գյուղապետարանի, մասնակցել է համահայկական մարաթոնին:
10. Կազմակերպվել է 148 քաղաքացիների ընդունելություն:
11. Բարեկարգվել և մաքրվել է Հայրավանք հանայնքին հարող Սևանա լճի ափամերձ տարածքները:

Ժողովի նախագահ՝

Քարտուղար՝

Դ. Բաղդյան

Ա. Վիրաբյան